ԳԱԳԻԿ Ա ԹԱԳԱՎՈՐԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՇՏԱՐԱԿՈՒՄ

Վերջերս, Աշտարակի Միրանավոր հինավուրց եռանավ բազիլիկան կորստից փրկելու դիտավորությամբ ձեռնարկված գիտական ուսումնասիրության ընթացքում, հուշարձանին ավելի ուշ կցված կրկնապատ-զրահ-կաղապարի արևմտյան թևը հեռացնելիս բացվեց ավելի քան 13 քմ մակերեսով 18 տողանի արձանագրություն։ Թեև գրերը լցված են հեռադարյա պատի կրաշաղախ լիցքով, տեղ-տեղ քերված ու մաշված, սակայն վերծանվում են բավարար հավաստիությամբ և գրեթե ամբողջանում են։

Թե՛ ժամանակի, թե՛ բովանդակության իմաստով թագավորական այս հրահանգը հազվադեպ երևույթ է, հույժ կարևոր իր լեզվաքերականական, ձեվաբանական շարակցությամբ, սոցիալ-տնտեսական, իրավական նկատառումներով ու ժառանգական տոհմաբանության դրվագումով։

Աշտարակի Միրանավորի վիմական արձանագրությունը հետևյալն է.



I Ի։ ՆԿԲ։ (1013) ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ ԹՈՐԳՈՄԵԱՆ,
Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒ-
II ԹԵԱՆ Տ[ԵԱՌ]Ն ՍԱՐԳՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹԱՂԻ-
ԿՈՍԻ, ՇՆՈՐՀԱՁԻՐ, ԱՌԱՏԱՊԱՐ-
III ԳԵՒ ՀՐԱՄԱՆԱՒՆ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ ԿԱՄ ԵՂԵՒ ԻՆՁ՝

ԳԱԳԻԿԱ, ՀԶԱՒԻՐ ԵՒ ՏԻԵԶԵՐԱԿԱԼ
IV ՇԱՀԻՆՇԱՀԻ ԵՒ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ ԱՐՔԱՅԻՑ
ԱՐՔԱՅԻ, ՈՐԴՈՅ ԱՇՈՏՈՅ, ՈՐԴ-
V ՈՅ ԱԲԱՍԱ, ՈՐԴՈՅ ՍՄԲԱՏԱ, ՈՐԴՈՅ ԱՇՈՏՈՅ
ԲԱԳՐԱՏՈՒՆՈ, ԱԶԱՏԵԼ ԶԱՇՏԱՐԱԿՍ
VI Ի ՇԱՐԻՅԱՏԷ ՀԱՅԻ ԱՄԵՆԱՅՆ ՅԵՂԻ, ԶՈՐ
ԵՒ ՍԵՐՄԱՆԷ ՈՔ, ԵՒ ԱԶԱՏԵՑԻ ԿԱՄԱԿ-
VII ՅՈՒԹԵԱՄԲ ԿԱՏԱՐԱՆԻԴԵԱ ԹԱԳՈՒՀՈՅ՝ ՋԻՒ-
ԳԱԿՑԻ ԻՄՈՅ, ՎԱՄՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՈ Ի-
VIII ՄՈՅ ԵՒ ԹՈՂՈՒԹԵԱՆ ՄԵՂԱՑ ԻՄՈՅ ԵՒ ՅԱՋՈ-
ՂՈՒԹԵԱՆ ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆՍ ԻՄՈՅ ԵՒ ՋԱՒԱ-
IX ԿԱՑ ԻՄՈՅ։ ԱՐԴ, ԱՅՍՄ ԳՐՈՅ-ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՇԱ-
ՐԻՅԱՏԻ ԱՇՏԱՐԱԿԱՑ, ԶՈՐ
X ԵՏՈՒ ԵՄ՝ ԳԱԳԻԿ ՇԱՀԻՆՇԱՀ, ԶՈՒՆԻ ՈՔ ԻՇ-
ԽԱՆՈՒԹԻՒՆ՝ ՈՉ ԵՄ, ԵՒ ՈՉ ՈՐԴԻՔ ԻՄ, ԵՒ ՈՉ Թ-
XI ՈՌՈՒՆՔ ԻՄ։ ԶԿՆԻ ԵԼԻՑ ԻՄՈՅ | | ԱՊԱ ԵԹԵ ՈՔ
ՀԱԿԱՌԱԿ ԱՅՍՄ ՎՃՌԻ ՅԱՅՏՆԻ ՅՈՐԴԵԱՑ ԻՄ-
XII ՈՅ ԿԱՄ Ի ԹՈՌԱՆՑ, ԱՅՆՊԻՍԻՆ ՅԱՄԵՆԱԿԱԼ ԲԱ-
ՆԷՆ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ ԵՒ Ի ՆՈՐԻՆ ԿԵՆ-
XIII ՍԱԿԻՐ Ս[ՈՒՐ]Բ ՆՇԱՆԷՆ ԵՂԻՑԻ ՆԶՈՎԵԱԼ, ՄԱ-
ՍՆ ԵՒ ԲԱԺԻՆ ԸՆԴ ՅՈՒԴԱՅԻ՝ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱ-
XIV ՎԱՃԱՌԻՆ ԵՒ ԸՆԴ ՏԻՐԱՍՊԱՆ ԱԶԳԻՆ ՀՐԻՒՑ ԸՆ-
ԿԱԼՑԻ ԵՒ Ի Ս[ՈՒՐ]Բ ԺՈՂՈՎՈՅՆ ՆԻԿԻԱ
XV ԳՃԺԸ-[ԻՑ]Ն ԵՒ ՅԱՄԵՆԱՅՆ ԱՐԺԱՆԱՒՈՐ ՍԲԲՈՅ ԵՒ Ի
ՍԲԲՈՅՆ ԳՐԻԴՈՐԷ ՆԶՈՎԵ ԵՒ ՄԵՂԱՑ ԻՄՈՅ ՊԱՐՏԱԿԱՆ
XVI ԼԻՑԻ ՅՈՅՆՍ ՏԻԵԶԵՐՎՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽԱ[Ի]Ս ԴԱ-
ՏՈՂԱԿԱՆ ԱՏԵՆԻՆ ԱՌԱՋԻ ԲԵՄԻՆ Ք[ՐԻՍՏՈՍ]Ի։ ԱՄԷՆ։
XVII ՀԱՍՏԱՏՈՒՆ Լ ԳԻՐ ԱՐՁԱՆԻՍ ԿԱՄԱՒՔՆ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ
ՇԻՆԵՑԷՔ, ՏՆԿԵՑԷՔ ԵՒ ՎԱՅԵԼԵՍՋԻՔ Ի ՓԱՌՍ Տ[Է]։
XVIII Ա[ՍՏՈՒԾՈ]Յ ՄԵՐՈՅ։

Վավերագիրը սկսվում է (ի տարբերություն մեր գրավոր խոսքի ստանդարտների) տարեթվով և կաթողիկոսի հիշատակումով, երկրորդ հատվածը թագավորին մեծարող տիտղոսներն են, երրորդը՝ նրա ծննդաբանությունը ծայրից ծայր, չորրորդը՝ արտոնագրի բուն իմաստը և դրանում՝ թագուհու կամակցությունը, հինգերորդը՝ շարիատի դիզման արտաքին-անձնական դրդապատճառները, վեցերորդը՝ վճռի անխախտելիության հիմնավորումը, յոթը՝ վճռախախտումը կանխարգելելու անեծքի բանաձևումը և ապա՝ կըրկնակի վերջաբանը։ Հենց սա, բազմաքայլ բաղադրամասերով, սքանչելի նըմուշ է հայերեն 15-դարյա վիմական բազմաքանակ արձանագրությունների շարքում։

Փորձենք մեկնաբանել արտոնագիրը քայլ առ քայլ։

1. Հայերեն վիմագրերում թվերը (թվատառերը) սովորաբար ուղեկըցվում են ի բուականիս հայոց, բուականին հայոց կամ բուականիս որոշիչներով, սակավ դեպքերում (ինչպես և այս)՝ թուականութեանս բուգոմեան արտահայտչամիջոցով։ Նման ձևակերպում հանդիպում է Աշտարակից ոչ հեռու, Մաստարայի 1015 թ. արձանագրությունում և այլուր, իսկ Թաւինի Կաթողիկեի Ուխտատուրի հին թվագիր արձանագրությունը սկսվում է ՄԼԲ (783) բուականութեան հայոց բառերով։ Թորգոմը, ինչպես հայտնի է, Հին կտակարանի պերսոնաժներից է (Մնունդ, ԺԱ)։ Ըստ Խորենացու Հայկ Նահապետի հայրն է, հայության խորհրդանիշը, նրա հետ են կապվում «Թորգոմեան ազգ, Թորգոմեան թիվ» արտահայտությունները։ Արձանագրությունում վկայակոչված Սարգիսը հայ ականավոր հոգևոր գործիչներից էր, որը Գագիկի հովանավորությամբ ընտրվեց Հայոց կաթողիկոս (992—1019) և մշտապես մնաց թագավորի աջակիցը։ Նրա օրոք կաթողիկոսական աթոռը

Արգինայից տեղափոխվեց Անի։ Այս վավերագրում կաթողիկոսը հանդես է գալիս իրրև գերագույն իրավական դեմք, որն առանց վերապահության, ակընկալիքի ու փոխհատուցման համաձայնություն է տալիս թագավորի որոշմանը՝ Աշտարակի ծանր հարկապարտույթի զիջման վճռին։



Ծիրանավոր եկեղեցու արևմտյան նորարաց պատ

2. Ճիշտ է, ընդարձակ արձանագրություններ շատ կան (Վանեվանք, 903 թ., Քարկոփի վանք, 910 թ., Հավուց թառի վանք, 1013 թ., Մարմաշենի վանք, 1029 թ. և այլն), սակայն անվարան կարելի է ասել՝ քիչ է պատահում, որ հայերեն վիմագրերում, անգամ սեպագրերում, թվարկվեն թագավորի ունեցած կամ չունեցած տիտղոսները, նրան վերագրվեն իր ժամանակներում գործածված, իր տոհմին վերապահված (նաև չվերապահված) պատվանունները։ Բայց քանի որ Գագիկ Ա-ն առավել հաջողակ, խելամիտ պետական գործիչ էր, վայելում էր լայն ժողովրդականություն։ Նրան հաջողվեց բարձրացնել երկրի փառքն ու համբավը, ուստի և թույլատրելի է համարվել Սայր տաճարի շինարարության ավարտի հիշատակագրությունում (1001 թ.) նրան մեծարելու ի մեծափառ թագաւորութեան Գագկա Հայոց եւ Վրաց Շահրնշահի դեռևս համեստ ու չափավոր բանաձևումով, իսկ Աշտարակի Ծիրանավորի արտոնագրում նա հանդես է գալիս, կարելի է ասել, իր ողջ շուքով ու փայլով, շքահանդեսով ու վաստակած առատ պարգևներով։ Այս դեպքում թագավորը մեծարվում է ճգաւր եւ տիեզերական (վերջին պատվանունը Բագրատունիներից կրել է միայն Գագիկի ավագ եղբայր Սմբատ Բ-ն), շահնշահ (որպիսին ճանաչեցին արաբները դինաստիայի հիմնադիր Աշոտ

Ա-ին) և հայոց մեծաց (հզոր, ականավոր) արքայից արքա պատկառազդու կոչումներով։ Նման տիտղոսներով ստուգապես օժտված չէ մի ուրիշ հայ թագավոր։

3. Արձանագրության հոգեբանական կառուցվածքն ասես նպաստել է երրորդ բաղադրամասի շարադրմանը՝ պահպանելով ընտրված սկզբունքը։ Այստեղ արդեն ծայրեծայր, հանվանե թվարկված են նախորդ թագավորները, տրված է Գագիկի ողջ սերնդաբանությունը։ Նման դիպված չի հանդիպում անգամ մատենագրության մեջ, մինչև իսկ Պարսկաստանում ու Հռոմում։ Տոհմածառի այսօրինակ շարակցությունը՝ որդոց-որդի, ավելի ուշ տարածում ստացավ։ Սակայն Գագիկը (անշուշտ նաև Սարգիս կաթողիկոսը) առաջնորդվել է ոչ թե ազգային, այլ կտակարանային ավանդույթով՝ ամբողջովին ներկայացնելով իր ծննդաբանությունն ու տոհմաբանությունը, իր նախնիներին, ինքը՝ Որդոյ Աշոտայ, որդոյ Աբասա, որդոյ Սմբատա, որդոյ Աշոտոյ Բագրատունւոն։ Ինչպես տեսնում ենք, ստույգ հաջորդականությամբ տրված է տոհմական ողջ ընտրանին՝ սկսած իր հայր Աշոտ Ողորմածից (953—977), Արաս Ա(928—953), Սմբատ Ա(892—914) և ապա՝ հորապապ Աշոտ Բագրատունին (855—891)։ Այս շարքում, բնականաբար, չեն հիշվում և տոհմածառից դուրս են մնում Գագիկի պապ Աբասի եղբայր Աշոտ Երկաթը (914—928) և եղբայրը՝ Սմբատ Տիեզերակալը (977—990), որոնց հետ նա կապված չէ հորից-որդի ժառանգական հաջորդականությամբ։ Թվարկվածները բոլորն էլ պետական նշանավոր գործիչներ են. բավական է հիշել, թե ինչպես Գագիկի հայր Աշոտը շենացրեց ու ամրացրեց Անի մայրաքաղաքը, իսկ եղբայր Սմբատը կառուցեց Անիի կրկնապարիսպները և հիմնադրեց Մայր տաճարը, «որ բացառիկ նշանակություն պիտի ստանար հայ ազգի պատմության մեջ»[1]։ Իսկ Գագիկն ինքը ոչ միայն շենացրեց, խաղաղեցրեց երկիրը, այլ նաև իր կնոջ՝ Կատարանիդեի վերակացությամբ ավարտեց Մայր տաճարը և կառուցեց զվարթնոցատիպ Գագկաշենը։

4. Հանրահայտ է նաև, որ Բագրատունիներից ամենաերկարակյաց թագավորը Գագիկ Բ-ն էր (990—1020)՝ «այր հզօր և յաղթող ի պատերազմի, սա ի խաղաղութեան կալաւ զաշխարհս Հայոց» և բարի հիշատակների արժանի եղավ[2]։ Գագիկին գովերգում ու փառաբանում են մեր մատենագիրները ամեն մի առիթի բերումով։ Չէ՞ որ եղբոր՝ Սմբատ Տիեզերակալի մահվան օրն իսկ, ստանձնելով հայոց գահը, նա անկասելի եռանդով ու արագորեն ընդարձակեց իր երկրի սահմանները, «Զի էր այր սրամիտ և վարժ ի պատերազմի և առատաձեռն ի բաշխելն. և զբաժ հարկաց յոլովից տեղեաց ազատեաց»[3]։

Ուշագրավ ու կարևոր է Ասողիկի երկրորդ՝ բաժ հարկից շատ տեղեր ազատելու մասին հաղորդումը։ Պատմիչները սովորաբար խուսափում են սոցիալական խնդիրներից, խորամուխ չեն լինում կյանքի այդ շատ կարևոր կողմի ոլորտը։ Առևտրի, տնտեսության, արդյունագործության զարգացմանը խթանելու նպատակով Գագիկը զիջում է ապրանքափոխադրության հնագույն և տևական մաքսային հարկը՝ բաժը[4], որը բազմիցս հանդիպում է վիմական արձանագրություններում։ Սակայն առավել տարածում ստացած պետական հարկը շարիատն էր, որ քանիցս վկայվել է հայերեն վիմագրերում (Տեկոր՝ 971—1008 թթ., Ալաման՝ 1001 թ., Հովհաննավանք՝ 1201 թ., Փարպի՝ 1264 թ., Մրեն՝ 1284 թ., Ավան՝ 1285—1287 թթ. և այլն)։ Այս տեսակետից հիշարժան է Մաստարայի 1015 թ. արձանագրությունը, որը կառուցվածքա-

---

1 Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 578։

2 Պատմութիւն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերտցւոյ, Վենետիկ, 1844, էջ 6։

3 Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 256։

4 Այս մասին հանդամանորեն տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Երևան, 1960, էջ 93-99։

լին-ոճական նմանությամբ մոտ է Ծիրանավորի վկայագրին[5]։ Այստեղ Վահրամ Պահլավունին զիջում է շարիատը Գագիկ Շահնշահի պատվին։ Օգտագործված է թվի թարգմեան ձևակերպումը, ինչպես և մատնանշված է իր կամ այլոց կողմից վճիռը փոխելու իրավունք չունենալու պարագան։ Իսկ Արուճի 1285 թ. արձանագրության հավաստմամբ հացի շարիատը զիջվել է հազար տարի[6]։ Սակայն շատ ավելի լայն, ստուգապատում և լայնահունչ է Ծիրանավորի սույն արտոնագրի շարիատ հարկային տերմինի իմաստաբանությունը։ Արտոնագրում հավաստված է. ազատել զԱշտարակս ի շարիյատէ հացի ամենայն ցեղի, զոր եւ սերմանէ որ։ Այս 10—11 բառերը, ըստ էության կազմում են նրա բուն բովանդակությունը։ Պարզվում է, որ Գագիկ Ա-ն այցելելով իր թագավորական կալվածքը, հասու լինելով նրա տնտեսական վիճակին ու առևտրական հարաբերություններին, բնակչության ապրելակերպին, արքայական վճռով արտոնում-ազատում է Աշտարակի բոլոր ցեղերին (առանց խտրության, բոլոր խավերին, ազատներին ու շինականներին) հացի շարիատից։ Հացն, անշուշտ, ընկալվում է իբրև ցորեն, գարի, առհասարակ՝ ընդեղեն, որն արտադրվում էր տեղում կամ ներմուծվում էր այլ վայրերից և վաճառվում քաղաքում։ Հացի շարիատի՝ որոշակի տոկոսը՝ որպես պետական հարկ, վաճառվող ընդեղենից մահմեդական հասույթ, գանձվում էր արքունիքի օգտին, որն էլ զիջում է Գագիկը։ Բայց ոչ միայն դա, նա զիջում է նաև նրանց արքունի մթերատոկոսը, ովքեր իրենց կալվածքներում ցորեն (ընդեղեն) կցանեն՝ («զոր և սերմանէ որ»), դրանով իսկ խրախուսելով հացահատիկային կուլտուրաների մշակությունը։ Այս պարագան, անշուշտ, վկայում է, որ Աշտարակում այգեգործության լայն տարածումը արգելակել էր երկրագործության՝ հացակուլտուրաների մշակությունը և սպառնալի էր դարձել բնակչությանը հացով ապահովելը։ Սա, փաստորեն, իրավական վճիռ, հրահանգ ու կարգադրություն է այն մասին, որ պետական իրավասության տակ գտնվող բնակավայր Աշտարակում հացամթերքների առուծախով և արտադրությամբ բոլոր զբաղվողները ազատվում են պետական սահմանափակումներից և տրվում է հացի առևտրի ու վարուցանքի ազատ, ոչնչով չպարտադրվող իրավունք։ Իսկ այդ վճիռը կայացվել է բազմաբեղուն գործունեությամբ հռչակված Կատարանիդե թագուհու կամակցությամբ՝ հավանությամբ ու հաճությամբ։

5. Այնուհետև, առաջին դեմքով հայտնվում է, որ այդ զոհաբերությունը կատարվել է Գագիկի հոգու փրկության, մեղքերի թողության, իր և զավակների հաջողության համար, որը խնդրի բարոյահոգեբանական կողմն է, իսկ բուն դրդապատճառները՝ ավելի խոր ու հեռուն գնացող։

6. Իրավական առումով արժեքավոր են արտոնագրի նաև 6—7-րդ դրվագները։ Դրանցում հստակորեն շարադրված է, որ Աշտարակը շարիատից ազատելու գիրը (վճիռը, որոշումը, թագավորի հրամանը) ոչ ոք իրավունք չունի խախտելու, անգամ՝ թագավորը (չունի որ իշխանութիւն՝ ոչ ես. եւ ոչ որդիք իմ եւ ոչ թոռունք իմ)։

Ինքնատիպ է վճռախախտումը կանխելու անեծք-սպառնալիքի ձևակերպումը։ Այդքան ամբողջական ու լիաշունչ մի այլ օրինակ չի նկատվում հայ վիմագրերում։ Գագիկը տիրականորեն ազդարարում է, որ եթե իրենից հետո որևէ մեկը հանդգնի հակառակը ներկայացնել իր հաջորդներին, ապա այդպիսիք յամենակալ բանէն Աստուծոյ եւ ի նորին կենսակիր սուրբ նշանէն եղիցի նզովեալ, մասն եւ բաժին ընդ Յուդայի՝ աստուածավաճառին եւ ընդ տիրասպան ազգին հրեից ընկալցի եւ ի սուրբ ժողովոյն Նիկիա Գանձը-ից եւ յամենայն արժանաւոր սրբոց եւ ի սրբոյն Գրիգորէ նզովէ եւ մեղաց իմոց պարտական լիցի։ Անգամ սպառնում է Քրիստոսի տիեզերական ատյանի դատաստանով։

---

5 Ծիրանավորի արձանագրության ոճի ու ձևակերպումների կնքադրոշմն ակնառու է նաև Կեչառիսի 1051 թ. ընդարձակ ու հետաքրքիր վիմագրում։

6 Շարիատի մեկնաբանությունը տե՛ս Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 263—271։

Նման բանաձևումը գործնական-իրավական բնույթի եզակի դիպված է՝ խստագույն պատժամիջոցների սպառնալիքով ապահովելու վճռի անշրջելիությունը, տևականությունը, կատեցման բացառումը, պայմանազանցման կանխարգելումը։ Անգամ մեծահամբավ գերագույնի (թագավորի) վճռի նկատմամբ սասանվում էր գերբնական հավատը, բարոյաօրենսդրական նորմերը ճեզքճեզքվում էին դարի ընձեռած ազատախոհության հարվածներից, և երկփեղկվում էր դարաշրջանի տիրապետող ու ազգային ոգին պահպանողապատվարող ուժերի միջև խորացող անդունդը։ Ակնհայտ է, որ վիպերգության ու գովքի շղարշից զատվում է ավատական միապետի նզովք-անեծքների նպատակաուղղվածությունը՝ անսասան պահելու թագավորի ու կաթողիկոսի բարեմիտ վճիռը, կանխարգելելու երկմտությունը դրա նկատմամբ։ Ասենք նաև, որ հայոց մեջ սրբացված են առանձնապես Ասիայի արևմտյան եզրում գտնվող փոքրիկ Նիկիայի տիեզերական ժողովի (325 թ.) որոշումները, որի մասնակից 318 (արձանագրության մեջ՝ ԳՃԺՀ=3.100+10+8=318) հայրապետները մերժեցին Արիոսի աղանդավորական ուսմունքը և ընդունեցին համաքրիստոնեական հավատի պատմության մեջ հայտնի 20 կետանոց «Հավատո հանգանակը»։ Նոր ընդունված քրիստոնեության դավանական սկզբունքների մշակման նպատակով տեղի ունեցած համաժողովին հայերից մասնակցում էր Գրիգոր Լուսավորչի որդի Արիստակեսը։ Այդ ժողովի հիմնական դրույթներն առ այսօր կիրարկվում են հայ Առաքելական եկեղեցու կողմից։

Յուրովի իմաստավորված «վերջներգից» բացի հետաքրքրություն են ներկայացնում հայ վիմագրության մեջ առաջին դիտվող և այնուհետև հետագա դարերում լայն կիրառություն ստացած գեղագիր կապգրերը։ Առանձնապես արժանահիշատակ են ԵԱՆ վերջածանցների համառոտագիր կապգրերը, ինչպես և երկսյուն տառերի վրա հնարամիտ գեղաքանդակ միատառ ու բազմաթայլ կցագրերը, որոնք հնարավոր է ստույգ բացել միայն տեքստի ճշգրիտ վերծանման դեպքում.



Արժեքավոր են նաև նույն՝ արևմտյան պատի ղույգ պատուհանների կամարաքարի ողկույզներ կտցահարող թռչունների (սիրամարգ) և մուտքի բարավորի որթերով ընդելուզված հավասարաթև խաչի բանդակները, որոնք թերևս ավելի հին են Քասախից։

Այսպիսով, Աշտարակի Ծիրանավոր եկեղեցու նորահայտ արձանագրությունը պատմիչների կողմից զարմանալիորեն մոռացված քաղաքի պատմության նոր ու լուսավոր էջերից է, Բագրատունյաց թագավորության պետական կյանքի ուշագրավ դրվագներից, հայ մատենագրության և գրավոր ստուգապատում խոսքի բացառիկ և ինքնաշունչ հուշարձաններից։

Այն միաժամանակ վկայում է, որ թեև Բագրատունիները չհասան համազգային-համապետական կայուն և տևական միավորման, չկտրեցին-չունեցան սեփական դրամ, սակայն մեծ հմտությամբ կազմակերպեցին երկրի ներքին ու արտաքին կյանքը, ստեղծեցին քաղաքական, տնտեսական, սոցիալական, առևտրական, իրավական միասնությամբ ու նպատակադրությամբ օժտված պետական միավորում։

Ս. Տ. ՍԱՂՈՒՄՅԱՆ